

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ԵՎԻՐՎԱԾ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՂՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆԵՐԻՆ

1960 թ. հունիսի 1—3-ը Երևանում, Մատենադարանի շենքում, տեղի ունեցավ Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ՝ Մատենադարանի և ՍՍՌԴ Գիտությունների ակադեմիայի Պատմության բաժանմունքին առընթեր Հնագրագիտական հանձնաժողովի հնագրագիտական ու աղբյուրագիտական հարցերին նվիրված գիտական սեսիան, որին մասնակցում էին նաև Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ձեռագրերի ինստիտուտը, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ու Հնագիտության ինստիտուտներն ու Հայկական ՍՍՌ ներքին Գործերի մինիստրության Արխիվային վարչությունը:

Սեսիան սկսվեց ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովի բացման հակիրճ խոսքով, որից հետո Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ձեռագրերի ինստիտուտի խնդիրները ձեռագրական ֆոնդերի ուսումնասիրության և հրատարակության բնագավառում գեկուցումով հանդես եկան Ի. Վ. Աբուլաձեն և Ն. Վ. Շոշիաշվիլին (Թբիլիսի): Նրանք ցույց տվեցին, որ Վրացական ձեռագրերի 20 հատորանոց գիտական ցուցակի լույս ընծայելուց բացի (ցարդ հրատարակված է 11 հատոր), նախատեսվում է հրատարակել վաղ և հետագա շրջանների գրական-գեղարվեստական մի շարք հուշարձաններ, ուժեղացնել ոչ վրացերեն ձեռագրերի գիտական նկարագրման աշխատանքները: Հայկական ձեռագրերի ցուցակը արդեն պատրաստ է և հրատարակվելու է Երևանում՝ Մատենադարանի հետ համատեղ: Լուրջ աշխատանքներ են կատարվում XIX—XX դդ. վրաց գործիչների արխիվային նյութերի մշակման ու հրատարակման ուղղությամբ:

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդի պատմական վավերագրերի, նրանց նկարագրության և հրատարակության սկզբունքներին

մասին գեկուցեց Մ. Ս. Սուլթանովը (Բաքու): Ձեռագրերի բազմալեզու և հարուստ հավաքածուից բացի, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ռեսպուբլիկական ձեռագրական ֆոնդում կենտրոնացված են տասնյակ հազարավոր արխիվային փաստաթղթեր, որոնց մշակմամբ ու թարգմանությամբ զբաղված է գիտական աշխատակիցների մի հատուկ խումբ: Հրատարակության են պատրաստվում Երբի վիլայեթի պատմության վերաբերյալ նյութերի հավաքածուն և Մ. Ֆ. Ախունդովի ու Մ. Կազիմբեկի գործունեության հետ առնչվող փաստաթղթերը: Ձեկուցողը առաջարկում է կոորդինացնել մասնագետների ջանքերը արաբատառ վավերագրերի ուսումնասիրության ու հրատարակության գործում:

Հին և միջնադարյան Հայաստանի պատմագրական հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության բնագավառում սովետական հայագիտության նվաճումների ու խնդիրների մասին գեկուցումով հանդես եկավ Լ. Ս. Խաչիկյանը: Նա հատկապես կանգ առավ գիտա-հետազոտական նորաստեղծ ինստիտուտ՝ Մատենադարանի առջև դրված խնդիրների վրա և ցույց տվեց, որ այնտեղ լայն աշխատանքներ են ծավալվել հայ պատմագրության չհրապարակված տեքստերը, հայկական միջնադարյան առակների ժողովածուն, Մխիթար Գոշի դատաստանագրերի համեմատական բնագիրը և փիլիսոփայական, քերականական, բժշկական ու այլ բնույթի մի շարք գործեր հրատարակության պատրաստելու ուղղությամբ: Ինստիտուտի ուղղորդության կենտրոնում է Մատենադարանի ձեռագրերի լիակատար ցուցակի ստեղծման աշխատանքը, որի առաջին հատորը պատրաստ կլինի ընթացիկ տարվա վերջում:

Սեսիայի մասնակիցները ծանոթացան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում հայ-ուսական բարեկամական հարաբերությունները (XVIII դարի առաջին երեսնամյակ) և Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմություն:

նր վերհանող արխիվային փաստաթղթերի հավաքման, ուսումնասիրման և հրատարակության պատրաստելու գծով կատարվող աշխատանքների հետ Այդ մասին զեկուցումներով հանդես եկան Ա. Գ. Հովհաննիսյանը և Մ. Պ. Աղալյանը:

Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ձեռագրերի ինստիտուտում պահվող XV—XVI դդ. արևելյան (արաբական, պարսկական, թուրքական) ավելի քան 2000 ձեռագրերի և XVI—XX դդ. հազարավոր վավերագրերի մշակման և ուսումնասիրության հարցերին էր նվիրված Յ. Ա. Արուստամյանի, Ռ. Վ. Գվարամիայի և Մ. Գ. Մամաջաշվիլու (Թբիլիսի) զեկուցումը: Նրանք պատմեցին, որ իրենց մոտ սկսվել է ձեռագրերի «Ղաջարյան» կոչված հավաքածուի գիտական նկարագրությունը, հրատարակության է պատրաստված հյուսիս-կովկասյան արաբական ձեռագրերից Մուհամեդ Թահիրի «Դաղստանյան սրերի փայլը Շամիլի մի քանի կոիվներում» արժեքավոր ժամանակագրությունը, լույս է ընծայվել արխիվային փաստաթղթերի ժողովածուն պարսկավրացական հարաբերությունների մասին:

Ե. Պ. Մետրեկին (Թբիլիսի), պատմելով վրացական ձեռագրերի արտասահմանյան (Սինայի, Նրուսահեմի, Աֆոնի և այլն) հավաքածուների մասին, ցույց տվեց, որ դրանց խորը ուսումնասիրությունը հույժ կարևոր է հին վրացական գրականության զարգացման մասին լրիվ գաղափար կազմելու համար, ուստի անհրաժեշտ է ավելի ուժեղացնել կապը վրացական ձեռագրերի ունեցող արտասահմանյան գիտական հաստատությունների հետ, ձեռք բերել ձեռագրերի միկրոֆապակները:

Այնուհետև լսվեց Գ. Վ. Աբգարյանի հաղորդումը Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայկական ձեռագրերի սովետական և արտասահմանյան հավաքածուների մասին: Նա հարց հարուցեց Մատենադարանում ունենալ աշխարհում գտնվող բոլոր հայկական ձեռագրերի միկրոլուսանկարչական ժապավենների պահպանման բաժին, որը հնարավորություն կընձեռի ի մի հավաքել և համեմատական ուսումնասիրության ու հրապարակումների ենթարկել հայ գրավոր մշակույթի դարավոր հուշարձանները: Առանց այդ միջոցառման, միայն Մատենադարանում գտնվող ձեռագրերի միջոցով, հնարավոր չէ իրագործել բնագրերի գիտական անթերի հրատարակությունը:

Ուշագրավ էր նաև Կ. Ա. Անտոնովայի (Մոսկվա) զեկուցումը: Գտնելով, որ հնդկահայ գաղթավայրերում ստեղծված գրական հուշարձանները կարող են նպաստել Հնդկաստանի

XVII դարի սոցիալ-տնտեսական պայմանների ուսումնասիրմանը, նա հայ գիտնականներին կոչ է անում գրադնել այդ կարգի նյութերի վերհանման գործով:

Ա. Ա. Տվերիտինովան (Մոսկվա) զեկուցեց ժամանակակից Թուրքիայում հնագրագիտական աշխատանքների վիճակի, իսկ Զ. Վ. Ուդալցովան (Մոսկվա)՝ VI—VII դդ. նորահայտ ուսվելայան պապիրուսների մասին: Հետաքրքրական է, որ այդ պապիրուսներից մեկը (VII դ.) տեղեկություններ է պարունակում հայ-իտալական հնագույն կապերի մասին:

Մեծ ուշադրությամբ լսվեց Մ. Ն. Տիխոմիրովի «Սլավոնական պատառիկները Մատենադարանի ձեռագրերում» թեմայով զեկուցումը: Բարձր գնահատելով մագաղաթյա այդ պատառիկների (XII—XVIII դդ.) արժեքը հայ-սլավոնական մշակութային հնագույն կապերի ուսումնասիրության գործում, զեկուցողը անհրաժեշտ է գտնում նրանց հրատարակությունը իրականացնել ուսու և հայ գիտնականների համատեղ ջանքերով:

Ս. է. Քուլանջյանի զեկուցումը նվիրված էր հայերեն հնագույն թվակիր ձեռագրի (873—892) պատառիկների հայտնաբերման պատմությանը և նրանց հնագիտական նշանակությանը: Նա ցույց տվեց վերջին տարիների ընթացքում Մատենադարանի ձեռագրերի պատառիկների հավաքածուում, ինչպես նաև ձեռագրերի պահպանակների միջից իր կողմից հայտնաբերված Կյուրեղ Նրուսահեմացու «Կոչումն ընծայություն» կորած ձեռագրի 17 թերթերի հնագրական կարևոր արժեքը:

Ֆիլիզբանդուգիայի բնագավառում ստեղծված գիտական նոր ուսումնասիրությունների վերաբերյալ զեկուցեց Ս. Ա. Կլեպիկովը (Մոսկվա): Այդ կապակցությամբ համառոտ հաղորդմամբ հանդես եկած Ա. Քոչքերյանը պատմեց Մատենադարանի XVIII—XIX դդ. մի շարք ձեռագրերի թղթի ֆիլիզբանդների ուսումնասիրության նախնական արդյունքների մասին:

Շատ հետաքրքրական էր Ն. Ա. Սիդորովայի «Ֆրանսիայի Ազգային գրադարանի միջնադարյան ձեռագրերի ֆոնդի և Փարիզում գտնվող «Խարտիանների դպրոցի» աշխատանքի կազմակերպման մասին» զեկուցումը: Պատմելով բարձրորակ հնագրագետ-արխիվիստների պատրաստման գործում «Խարտիանների դպրոցի» կատարած դրական աշխատանքների մասին, զեկուցողը հարց բարձրացրեց լուրջ ուշադրություն ընծայելու լատինական և արևմտաեվրոպական հնագրագիտության ասպարեզում, ինչպես նաև դրամագիտության, կնքագիտության, վավերագիտության և պատմական օժան-

դակ ալլ գիտությունների գծով մասնագետներ պատրաստելու գործին:

Արևմտանվրոպական միջնադարի պատմության աղբյուրագիտության և Մ. Ս. Սալտիկով-Շչեդրինի անվան զրադաքանում պահվող ձեռագրերի, նրանց հավաքման պատմության ու նշանակության մասին զեկուցեց Ա. Գ. Լյուբ-լինսկայան (Լենինգրադ): Ընդգծելով այդ նյութերի բացառիկ արժեքը արևմտանվրոպական երկրների պատմության ուսումնասիրման բնագավառում, Ա. Գ. Լյուբլինսկայան ես այն կարծիքը հայտնեց, որ անհրաժեշտ է լրջորեն մտահոգվել այդ սկզբնաղբյուրներն ուսումնասիրելու կարող ուժերի պատրաստման անհետաձգելի խնդրով:

Հայկական նորահայտ վիմագիր արձանագրությունների հավաքման, ուսումնասիրության, նրանց հնագրական և կուլտուր-պատմական նշանակության մասին հետաքրքրական զեկուցումով հանդես եկավ Ս. Գ. Բարխուդարյանը: Վերջին չորս տարում Մատենադարանի ձեռք բերած 290 հայկական և 45 օտարալեզու ձեռագրերին էր նվիրված Ս. Ս. Արևշատյանի և Ս. Ս. Եզանյանի զեկուցումը: Վ. Գ. Կզարթմյանը, զեկուցելով Հայաստանի արխիվային և գիտահետազոտական հաստատությունների համառոտ հրատարակչական աշխատանքի փորձի մասին, առաջարկ ցուցրեց անդրկովկասյան ռեսպուբլիկաների արխիվային աշխատակիցների միացյալ ուժերով հրատարակելու հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունն արտացոլող արխիվային փաստաթղթերի ժողովածուներ:

«Հայ պատմագրական հուշարձանների ուսմանը թարգմանության արդի վիճակը և թարգ-

մանության մի քանի տեսական հարցերը» թեմայով զեկուցեց Մ. Օ. Դարբինյանը: Նրա կարծիքով անհրաժեշտ է գումարել ՍՍՌՄ ժողովուրդների լեզուներից ուսմանը թարգմանող մասնագետների հատուկ խորհրդակցություններ՝ մշակելու համար թարգմանությանը, հատկապես ուսմանը տրանսկրիպցիային վերաբերող տեսական մի շարք հարցեր:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց Հ. Գ. Փափաղյանի զեկուցումը, որը նվիրված էր Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվող բազմաթիվ պարսկերեն վավերագրերի ժանրային առանձնահատկություններին ու նրանց նշանակությանը՝ Սեֆյան շրջանի իրանական վավերագրիտության ուսումնասիրության բնագավառում:

Սեֆյանի մասնակիցները միահամուռ ցանկություն հայտնեցին հնագրագիտության և աղբյուրագիտության ասպարեզում ձեռք բերված փորձի փոխանակման համար այսուհետև ևս գումարել հատուկ սեֆյաներ ու խորհրդակցություններ՝ Սովետական Միության համապատասխան գիտական կազմակերպությունների լայն մասնակցությամբ: Որոշվեց հարց հարուցել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության բաժանմունքի առջև՝ համապատասխան միջոցներ ձեռք առնել ՍՍՌՄ արխիվներում պահվող արևմտանվրոպական երկրների պատմության վերաբերյալ ձեռագրերի ու վավերագրերի ուսումնասիրման գործը պատշաճ րարծրության վրա դնելու համար:

Որոշված է սեֆյանի նյութերը հրատարակել և առանձին ժողովածուով:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱ ՀԱՐԵԼՅԱՆԸ

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ դասական կերպարվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկն է Վարդգես Սուրենյանցը (1860—1921), որն իր ավելի քան 35 տարի տևող ստեղծագործական կյանքի ընթացքում հանդես է եկել որպես գեղանկարիչ, գիրք ձեռագրող, թատերական նկարիչ, թարգմանիչ, ճարտարապետ, արվեստի տեսաբան և այլն:

Գիտնական-արվեստագետի ծննդյան 100-ամյակի առիթով, հունիսի 11-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում կայացավ հանդիսավոր երեկո, որին ներկա էին պարտիական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության և կուլտուրայի գործիչներ:

Իր բացման խոսքում, Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստր Հր. Մարգարյանը գնահատելով Վ. Սուրենյանցի գերն ու նշանակությունը հայ կերպարվեստի զարգացման գործում, միաժամանակ նշեց, որ նկարչի արվեստը մոտ է ու հարազատ սովետական ժողովրդին, իր հիմքում դրված հայրենասիրությամբ ու խնտերնացիոնալիզմով:

Վ. Սուրենյանցի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ Հայաստանի Կերպարվեստագետների միության նախագահ Ռ. Պարսամյանը: Զեկուցողը կանգ առավ Վ. Սուրենյանցի խոշոր կտավի գործերի վրա, որոնք իրենց զաղափարական նպատակասլացությամբ այսօր էլ արժեքավոր են: Անց-

յալ դարի 90-ական թվականներին, կապվելով ռուսական առաջավոր ռեալիստական գեղարվեստական միության՝ Պերեդվիժնիկների ընկերության հետ, Վ. Սուրենյանցը նրանց լավագույն օրագրից հանրապետական ժողովրդական ստեղծագործական ժառանգությունը, զեկուցողը հանգամանորեն խոսեց նրա գրքային նկարազարդումների, թատերական ձևավորումների, թարգմանությունների և տեսական հարցադրումների վրա, և ավարտեց իր խոսքը, ասելով. «Սուրենյանցի արվեստը դարձել է ժողովրդի սեփականությունը, և այսօր Սովետական Հայաստանի աշխատավորությունը իր վերածնության 40-ամյակի նախօրյակին մեծարում ու երախտիքի խոսքն է ուղղում իր լավագույն զավակներից մեկին, որն իր համեստ լուծման է ներդրել դարավոր խավարից ու տառապանքներից ժողովրդի ազատագրման վեհ գործին»:

Ձեկուցումից հետո, Հայաստանի Գրողների միության անունից Ելույթ ունեցավ բանաստեղծ Գ. Էմինը, Հայաստանի Թատերական ընկերությունից՝ Լ. Խալաթյանը, Ծարտարապետների միությունից՝ ճարտարապետ Վ. Հարությունյանը, որոնք բնորոշեցին Վ. Սուրենյանցի մեծ ու անգնահատելի վաստակը արվեստի տարբեր բնագավառներում: Անվանի նկարչի հոբելյանի առթիվ Պետհրատը լույս ընծայեց նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված առաջին մենագրությունը:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ Վ. ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 13-ին, Արվեստի աշխատողների տանը կայացավ գիտական սեսիա, որը կազմակերպել էին Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը և Հայաստանի Կերպարվեստագետների միությունը:

Արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռ. Զարյանը իր բացման խոսքում Վ. Սուրենյանցին բնորոշեց որպես հայ մշակույթի լավագույն ներկայացուցիչներից մեկի, որպես խոշոր հայրենասեր-արվեստագետի, որն իր ողջ ստեղծագործական ու հասարակական կյանքով, իր արվեստի բազմակողմանի հմայքով թանկ է ու հարգատ օղջենական ժողովրդին:

«Վարդգես Սուրենյանցը որպես պատմական նկարիչ» հանգամանալից զեկուցմամբ հանդես եկավ Հայկական ՍՍԻ ժողովրդական նկարիչ Գ. Գյուրջյանը: Վերլուծելով Վ. Սուրենյանցի

* * *

Հունիսի 12-ին, Հայաստանի Պետական պատկերասրահում բացվեց Վարդգես Սուրենյանցի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Հայկական ՍՍԻ ժողովրդական նկարիչ, բանդակագործ Ս. Ստեփանյանի հակիրճ խոսքից հետո, այցելուները ծանոթացան նկարչի աշխատանքներին: Իրենց հիմքում դրված համամարդկային խորը զգացումների արտահայտմամբ հմայում են «Ունակույս արված սրբություն», «Հոփսիմեի եկեղեցին», «Եամիրամն Լեւոն Գեղեցիկի դիակի մոտ», «Զարեկ թագուհու վերադարձը դահլիճ», «Կինն ասպետ», «Ֆիրդուսին կարդում է իր «Եւհաննան» Մահմեդ Ղազնևացուն», «Սայում», «Հարեմում» և բազմաթիվ այլ գեղանկարչական կտավներ: Կատարողական յուրատիպ վարպետությամբ հիացմունք են առաջացնում «Հայկական ժողովրդական հեքիաթների», Օ. Ուսլույի «Նրիտասարգ թագավորը» հեքիաթի և Լ. Պուշկինի «Բախչի-սարայի շատրվանը» անմահ պոեմի հույսկապ նկարազարդումները: Ցուցադրված էին նաև մի շարք էտյուդներ, գծանկարներ, թատերական ձևավորումների էսքիզներ: Ցուցադրված աշխատանքները, որոնց թիվն անցնում է 200-ից, հիմնականում պատկանում են Հայաստանի Պետական պատկերասրահին: Որոշ ստեղծագործություններ հատկապես բերվել են Լենինականի Գավառագիտական և Մոսկվայի Մ. Գորկու անվան Պետական գեղարվեստական ակադեմիական թատրոնի թանգարաններից: Մ. Ղ.

պատմական թեմաներով աշխատանքները, Գ. Գյուրջյանը կանգ առավ նկարչի կողմից բնութագրված թեմաների բազմակողմանի, նպատակալաց մեկնաբանման վրա, որոնցից և բխում էր այդ կտավների կոմպոզիցիաների կլասիկ կառուցումը: Վերլուծելով նաև Վ. Սուրենյանցի պատկերած կանացի կերպարները, զեկուցողը իր խոսքն ամփոփեց, նշելով Վ. Սուրենյանցի տեղն ու նշանակությունը հայ կերպարվեստում՝ պատմական ժանրի զարգացման գործում:

«Վարդգես Սուրենյանցը որպես թատերական նկարիչ» թեմայով հանդես եկավ թատերագետ Լ. Խալաթյանը: Դեռևս անցյալ դարի 80-ական թվականներից Վ. Սուրենյանցի անունը կապվում է թատերական աշխարհի հետ, երբ սկսվում է նկարչի և անվանի ողբերգակ Պետրոս Աղամյանի բարեկամությունը: Հետագայում

Վ. Սուրենյանցի անունը կապվում է Պետեր-բուրգի Մարինսկի և Վ. Կոմիսարժևսկայի թատրոնների, ինչպես նաև Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հետ, որտեղ նա մի շարք բեմադրություններ է ձևավորում, սերտ համագործակցության մեջ լինելով թատերական արվեստի խոշոր ներկայացուցիչներ Կ. Ստանիսլավսկու և Վ. Նեմիրովիչ-Պանչենկոյի հետ:

«Վարդգես Սուրենյանցը որպես Շեքսպիրի երկերի թարգմանիչ» թեմայով կազմած իր զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Թերզիբաշյանը բարձր գնահատական տվեց Վ. Սուրենյանցի կատարած աշխատանքին՝ Շեքսպիրի «Ռիչարդ III», «Օթելլո», «Միքամառնային գիշերվա երազ», «Հոլմոս Կեսար» պիեսների և մի շարք սոնետների թարգ-

մանությունների գործում: Այդ թարգմանությունները, որ նկարիչը կատարել է դեռևս Մյունխենի Գեղարվեստի ակադեմիայի սան եղած տարիներին (1883), նրան հետաքրքրել ու հրապուրել են մինչև կյանքի վերջը:

«Վարդգես Սուրենյանցը և Արևելքը» զեկուցումով հանդես եկավ արվեստաբան Մ. Ղազարյանը: Զեկուցողը նշեց, որ դեպի Արևելքն ունեցած Վ. Սուրենյանցի նախասիրություններին հանդիպում ենք նկարչի առաջին իսկ աշխատանքներում: Այդ սերը դեպի Արևելքը նրան ստիպում է ճանապարհորդել Պարսկաստան, ապա Իսպանիա, որոնց արդյունքն է լինում հետագայում արևելյան թեմաներով մի շարք աշխատանքների հանդես գալը:

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի նախաձեռնությամբ և ՍՍՌԳ Գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան համաշխարհային Գրականության ինստիտուտի, Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ռուսթավելու անվան Գրականության ինստիտուտի, Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նիզամու անվան Գրականության ինստիտուտի մասնակցությամբ ս. թ. մայիսի 25—28-ը Երևանում անցկացվեց ժողովուրդների միջև գրական կապերի ու փոխազդեցությունների ուսումնասիրման հարցերին նվիրված Անդրկովկասյան կոնֆերանս:

Կոնֆերանսի քննարկմանն էր ներկայացված բազմաթիվ հարցեր արծարծող 32 զեկուցում ու հաղորդում, որոնք նախապես տպագրվել ու բաժանվել էին մասնակիցներին:

Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտը կոնֆերանսի նախօրյակին հրատարակեց Ա. Բաբայանի «Հայ գրական կապեր (1920—1960)» (նյութեր մատենագիտության համար) աշխատանքը, որտեղ հիմնականում ներկայացված են Սովետական իշխանության տարիներին հայ և մյուս ժողովուրդների գրական կապերի ուսումնասիրմանը նվիրված գրքերը. հոգվածները և այլ նյութեր:

Կոնֆերանսին ներկա էին նաև հյուրեր Լիտվայից, Թուրքմենիայից և Կիբգիզիայից:

Կոնֆերանսի օրերին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ու արվեստի թանգարանում բացվեց ցուցահանդես՝ նվիրված գրական կապերի ու փոխազդեցությունների հարցերին: Փաստացի հարուստ

նյութերի հիման վրա ցուցադրված էին գրականության մեջ իր վառ արտացոլումը գտած Անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը, ինչպես նաև նրանց կապերը աշխարհի տարբեր ժողովուրդների հետ:

Մայիսի 25-ի երեկոյան, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում, տեղի ունեցավ կոնֆերանսի հանդիսավոր բացումը:

Կոնֆերանսի նախագահությունում են Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Թովմասյանը, Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի քարտուղար Մ. Ադոնցը, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, ակադեմիայի նախագահության անդամներ, հյուրեր:

Կոնֆերանսը հակիրճ ճառով բացում է ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Այնուհետև հանդես է գալիս Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Թովմասյանը, որին ներկաները դիմավորում են ջերմորեն: Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անունից նա ողջունում է կոնֆերանսի մասնակիցներին և նրանց մեծ հաջողություններ մաղթում աշխատանքում:

Իր ելույթի սկզբում ընկ. Թովմասյանը կանգ է առնում արդի միջազգային դրության մի քանի հարցերի վրա: Նա մասնավորապես նշում է, որ մինչդեռ ՍՍՌԴ-ը և սոցիալիստական երկրների ամբողջ լագերը վարում են խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու փոխմթնոնման հետևողական քաղաքականություն, Ամերիկայի Միացյալ Նահանգների իմ-

ւերիախիստական շրջանները և նրանց սպասարկուները՝ «սառը պատերազմի» քարոզիչները զրազված են ժողովուրդների միջև թշնամանք հրահրելով, ազատասեր ժողովուրդների նկատմամբ խտրականություն կիրառելով:

Այնուհետև ընկ. Թովմասյանը խոսում է մեր երկրում կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում սովետական գիտնականների, կուլտուրայի, գրականության և արվեստի դործիչների խնդիրների մասին:

— Ներկայումս,— ընդդժում է նա,— առանձնահատուկ նշանակություն են ստանում ժողովուրդների փոխադարձ շփումը և կուլտուրական արժեքներով փոխադարձ հարստացումը: Այս ուղղությամբ շատ բան է արվել Անդրկովկասի ռեսպուբլիկաններում: Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի գիտնականները մեծ աշխատանք են կատարել մեր ժողովուրդների և ռուս մեծ ժողովրդի բազմադարյան կուլտուրական ու գրական կապերի հայտնաբերման և ուսումնասիրման ուղղությամբ:

Անցյալի կուլտուրայի առաջավոր գործիչները մեզ պատգամել են աչքի լույսի պես պահպանել Անդրկովկասի և Ռուսաստանի ժողովուրդների եղբայրական անխզելի կապերը:

Սոցիալիստական դարաշրջանում այդ բարեկամությունը որակական նոր բովանդակություն, նոր իմաստ է ստացել: Սովետական գրողների փայլուն պլանդան, որոնց գործունեությունը ծավալվեց Սովետական իշխանության տարիներին, անգնահատելի ավանդ մտքրեց ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության գաղափարների գեղարվեստական մարմնավորման գործում: Գորկու, Մայակովսկու, Շոլոխովի, Ռիլսկու, Չարենցի, Վուրդոնի, Լեոնիձեի, Թուրսուն-Ջաղևի և ուրիշ շատերի անունները գրված են ժողովուրդների բարեկամության ու համերաշխության համար կատարված մեծագործությունների փառապանծ տարեգրության մեջ:

Այժմ արդեն վերջնականապես հաղթանակել է լենինյան այն գաղափարը, որ կոմունիզմի դարաշրջանի կուլտուրան ստեղծվելու է ՍՍՌՄ ժողովուրդների ազգային կուլտուրաների բարձր զարգացման հիմքի վրա: Մեզ մոտ՝ Սովետական Միությունում միայն գրական կապերի մասին խոսելը արդեն բավական չէ: Մենք ստեղծել ենք մի մեծ սովետական գրականություն ու կուլտուրա, որը բովանդակությամբ սոցիալիստական է, ձևով՝ ազգային: Սովետական գրականությունը զարգանում է մարքսիզմ-լենինիզմի միասնական հիմքի վրա: Երկրի անլուսա միասնությունը, սովետական հասարա-

կարգի միասնական տնտեսական հիմքը, ՍՍՌՄ ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնությունն ու բարեկամությունը որոշում են սովետական ժողովրդի կյանքի գեղարվեստական մարմնավորման էությունն ու առարկան: Հետևաբար, մեր հասարակության մեջ խոսքը ոչ թե պարզապես կապերի մասին է, այլ ամենից առաջ մեր բազմազգ սովետական գրականության եղբայրական համագործակցության ու փոխադարձ հարստացման մասին, մի գրականություն, որը պատկերում է մեր հերոսական դարաշրջանը ՍՍՌՄ ժողովուրդների լեզուներով:

Գրականության զարգացման այդ օրինաչափ զարգացման ուղին հրամայաբար պահանջում է անհաշտ պայքար մղել ազգային սահմանափակվածության բոլոր դրսևորումների դեմ: Պետք է ընդդժել, որ մեր ժամանակներում նացիոնալիզմի ռեցիդիվների ամեն մի դրսևորում չի կարող դիտվել այլ կերպ, քան որպես ժամանակակից ռեակցիոն բուրժուական գաղափարախոսության արձագանք:

— Սովետական գրականության ուժը,— ասում է վերջում ընկ. Թովմասյանը,— կոմունիստական պարտիայի ղեկավարությունն է: Սովետական ինտելիգենցիայի համար չկա առավել ազնիվ խնդիր և մեծ պատիվ, քան աշխատել և ստեղծագործել ի փառս կոմունիզմի հաղթանակի:

Բանասիրական գիտությունների դոկտոր Ի. Նեուպակովան (Մ. Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտ) «Գրական կապերի և փոխազդեցությունների ուսումնասիրման մի քանի հարցեր» գեկուցման մեջ նշում է, որ համաշխարհային գրականության պատմությունը ընդգրկում է իր մեջ բազմապիսի և բազմածավալ կապեր, որոնք պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր դրսևորում են ունենում և գրականությունների փոխադարձ հարստացման աղբյուր հանդիսանում:

Գաղափարական ներկա պայքարում գրական կապերի և փոխադարձ ազդեցությունների պրոբլեմը կենդանի թելերով կապված է արդիական հրատապ հարցերին: Անհրաժեշտ է, որ ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրվեն ՍՍՌՄ ժողովուրդների միջև եղած գրական կապերի առանձնահատկությունները սոցիալիստական հասարակության պայմաններում, ու սովետական գրականության միջազգային նշանակության ու կապերի բնույթը, գաղութային լծից ազատագրվող ժողովուրդների գրականության վերածնունդն կամ ստեղծման մեջ գրական կապերի դերը:

Ի. Նեուպակոնեան դրված խնդիրների լուսաբանման համար մանրամասն վերլուծում է գրական կապերի վերաբերյալ Ռուսաստանում և այնուհետև ՍՍՌՄ-ում գոյություն ունեցող ուղղությունները, ձևերը բերված արդյունքները և հետագա անելիքները:

«ՍՍՌՄ ժողովուրդների գրականությունների ստեղծագործական փոխազդեցության խնդիրները» զեկուցումով հանդես է գալիս բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Լոմիձեն (Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտ):

Սովետական Միության մեջ ազգային կուլտուրաների զարգացման առանձնահատկությունները — ասում է զեկուցողը, — արտահայտվում են ինչպես առավել, այնպես էլ նվազ զարգացած բոլոր ազգային կուլտուրաների ծաղկման մեջ: Զգալիորեն թուլանում է պատմականորեն պայմանավորված այն խիստ տարբերությունը, որ գոյություն է ունեցել ազգային տարբեր կուլտուրաների միջև: Սովետական հասարակության կառուցվածքը՝ հիմնված ժողովուրդների հուսալի ու հարատև բարեկամության, փոխադարձ վստահության, տաղանդի, մտքի նկատմամբ հարգանքի վրա, հնարավորություն է ստեղծել սոցիալիստական ազգերի կուլտուրաների մերձեցման ու փոխադարձ կապերի ամրապնդման համար:

Զեկուցողը բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս սովետական հասարակության զարգացման տարբեր էտապներում գրական կապերի ու փոխազդեցությունների տարբեր դրսևորումները, որոնք խորր ստեղծագործական բնույթ են կրել:

Ակադեմիկոս Մ. Դադաշզադեի, բանասիրական գիտությունների թեկնածու Շ. Սահակյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Ս. Արեշյանի զեկուցումները նվիրված էին Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում գրական կապերի ուսումնասիրման բնագավառում կատարված աշխատանքների բնութագրման ու հետագա անելիքներին:

«Հին Վրաստանի գրական կապերի հարցի շուրջը» թեմայով զեկուցում է կարգում Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ա. Բարամիձեն, իսկ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Հ. Արասլին ելույթ է ունենում «Մերձավոր Արևելքի ժողովուրդների և ադրբեջանական գրականությունների փոխադարձ կապերը» թեմայով: Պրոֆ. Ա. Արշարունու (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր հայարաբական գրական կապերի պատմությանը:

Գրական կապերին ու փոխազդեցություններին վերաբերող տարբեր հարցերի շուրջ զեկուցումներով ու հաղորդումներով հանդես են գալիս՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Գվախարիան (Վրաստան) «Պարսկական գրական հուշարձանների վրացական թարգմանությունների նշանակությունը պարսկա-տաջիկական գրականության մի բանի հարցերի լուսաբանման համար», Բ. Չուգասզյանը (Հայաստան) «Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործության վրա պարսից գրականության ազդեցության հարցի շուրջը», Ի. Բոգոմոլովը (Վրաստան) «Ռուս-վրացական գրական փոխադարձ կապերի պատմությունից», բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Ջնդին (Հայաստան) «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը ժողովրդական բանահյուսության մեջ», փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ա. Սեիդ-Ջադեն (Ադրբեջան) «Խ. Աբովյանը և Ադրբեջանը», բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Սեիդովը (Ադրբեջան) «Հայ-ադրբեջանական գրական կապերի պատմությունից»:

Կոնֆերանսի քննարկմանը ներկայացված զեկուցումներից հարկ է հիշատակել Մ. Արեշյանի անվան Գրականության ինստիտուտի դիրեկտոր Գ. Հովնանի «Դոբրոլյուբովը և Մ. Գորկու հայ գրական-հասարակական միտքը», բանասիրական գիտությունների դոկտոր Ռ. Սամարինի (Մոսկվա) «Արտասահմանյան գրականության մեջ համեմատական ուսումնասիրման ժամանակակից վիճակի մասին», բանասիրական գիտությունների թեկնածու Հ. Բաբաևի (Ադրբեջան) «Ռուս-ադրբեջանական գրական կապերի համեմատական ուսումնասիրումը», Պ. Հակոբյանի (Հայաստան) «Խաչատուր Աբովյանը և Մ. Գորկու 30-ական թվականների էստոնական հասարակական գործիչները», բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Երեանլիի (Հայաստան) «Բաքվի 26 կոմիսարները Անդրկովկասի ժողովուրդների գրականությունների մեջ», Ա. Ազաևի (Ադրբեջան) «Արևմտա-կովկասյան գրականությունը և Նիզամին», Տ. Կարապետյանի (Հայաստան) «Հայ գրողները Վրաստանի և վրաց ժողովրդի մասին» և այլ զեկուցումներ:

Կոնֆերանսի վերջում տեղի ունեցավ զեկուցումների քննարկում և մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Նիստրատովան (Մոսկվա), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը, պրոֆ. Վ. Վարդանյանը, Ա. Շամիրովը (Երևան) և ուրիշներ:

Բ. 2.